ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1895-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, համայնք Բերդ, Բերդ քաղաք, Այգեստան փողոց 2/2 հասցեում գտնվող 208.45 քառ. մետր մակերեսով կառավարչական շենքը (կադաստրային ծածկագիրը՝ 11-002-0096-0020-001-002, անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ 11 744 566. 50 դրամ) և շենքի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ (հատկացված), ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող 0.0703 հեկտար մակերեսով, 11-002-0096-0020 կադաստրային ծածկագրով հողամասը (շենքի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ (հատկացված) 0.0703 հեկտար մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության բաժնեմասը կազմում է 20468/47811, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12082020-11-0052) (այսուհետ՝ անշարժ

գույք) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեից (այսուհետ՝ կոմիտե) և ամրացնել (հանձնել) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությանը (այսուհետ՝ ծառայություն)՝ ծառայության Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզային վարչության Բերդի տեղամասի տեղակայման, տեղամասի աշխատակիցների համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ծառայության պետի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ